

19079

1916 ՄԷ 199


ԱՄԱՐԱՆԹ



ԱԼԻԹԱ ԿՈՒՄԻ

«Եւ կալեալ զձեռանէ մանկանն՝
ասէ. Տա՛լիքա, Կո՛ւմի, Որ բարգ-
մանի. Աղջի՛կ դու, քեզ ասեմ՝ արի»:

Աւետարան Մարկոսի Ը. 41



ԹԻՖԼԻՍ

և Ն. Աղանեանի, Պոլից. 7

1915

891.99

Ա-48

199 NOV 2010

U-48

ВУЗОВСКИЙ
Академия Наук
СССР

«Եւ կալեալ զձեռանէ մանկանն՝
ասէ. Տա՛լիքա, Կո՛ւմի, Ու քարգ-
մանի. Աղօ՛րի՛կ դու, Բեզ ասեմ՝ արի»:

Աւետարան Մարկոսի Ը. 41



பெரியது

Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1915

08.02.2013

19079

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ



57049.66

«ՏԱ՛ԼԻԹԱ ԿՈՒՄԻ».

Ա.

«Տալիթա Կումի»: Եւ այսպէս խօսեց
Ձայնը հեռուից այն կենսախրախոյս,
Նա հնչեց ուժգին, հոգեւալաց հոսեց,
Որ նէ մահատիպ մրափից տայ խոյս...
Ելիր Քաղցրունի, հայրենիքիս կոյս
Սթափւիր Քոյրիկ, չըպիտի մեռնես,
Կուրծքիդ մէջ ծագի թող կենսուրախ յոյս.
Օ՛ դարնանացիր դու, որ ձմեռն ես...
Արշալոյս է, քաղցր ազատութեան օր—
Ծագել է օրը, որ կինը փրկւի.
Աստղերից վերեւ գնաց ձայնը Մօր,
Բողոքը կնոջ... հերիք նէ պրկւի
Պաշարմունքների կապերով—զրկւի,
Քաղցր-ազատ կեանքից մնայ անբաժին.
Հերիք կրքերի ճանկերում զրկւի—
Ստրկացնի հր՝ ն ու կաշին:

Կնոջ փրկութեան դրօշն է ծածան,
Ահա լուսաւոր ամեն մի երկրում.
Կին, մայրեր, կոյսեր, իրենց ան բացան
Սրտերն ու կուրծքեր, ուր են ցաւեր կրում,
Իրենց արիւնով տխուր վէպեր գրում...
Շահում են սրտեր իրենց կարեկից
Հէնց տղամարդկանց շարքից ու բերկրում,
Որ կառնեն բաժին կեանքի բարիքից:
Ի՛ր իրաւունք ունեն: Սրանից շատ վաղ
Այս իրաւունքը պիտ' նրանց տրւէր,
Բայց տղամարդը, ամօթ ու աւանդ,
Գիտէր, որ նէ պիտ ազատագրւէր,
Իւր կոշման բարձր գահի վրայ դրւէր...
Բայց հնչեց ժամը, որ մարդն ան մոլի,
Պահպանող ու բուռն կարծիքը ցրւէր
Ձգար հաւասար է Ձայնն Ամուլի:
Ելիր, գողտրիկ սեռ, հերիք կարգան սուգ
Ամեն տրորւած կնոջ տանջող հոգի.
Որ թափելով իսկ ծով-ծով արտասուք,
Հանգցնել հուրը այն մարդ-մողորքի
Հազիւ դէմ եկար գթացող ոքի...
Ձարթնէք, խեղճ մայրեր, քեզ, անարգւած կոյս
Ասում եմ, դարթիր և ձայն բողոքի
Բարձրացրէք գտնել Սէր, Հաւատք և Յոյս...
Մայրական սրտեր, որոնք երբեմն
Խանդակաթ սիրով լի զեղուն էիք.
Որ բիւր հերոսներ աշխարհիս բեմն
Ուղարկեցիք, միշտ դուք բեղուն էիք.
Աստուծոյ դրախտի դուք մեղո՞ւն էիք,

Եւ պատրաստեցիք մեղր, ով լեղին
Խառնեց՝ մենք գիտենք: Գեղգեղուն էիք
Դուք, ծնող եղաք վեհ ու Շքեղին:
Մայրութիւն—Տիպար՝ եսի չքացման,
Անձնւորութեան կենդանի կոթող
Օ՛ր եղիր յաւէժ, թող անշքացման
Ձրդիմի աշխարհս, սփոփանք ո՞ն թող
Լինես դու նրան, որին ան ու դող
Կիրք ու քէն ընդ միշտ լլկում են լլկում...
Եղիր մեր սրտի գրքի մէջ դու տող,
Մեզ, անջինջ տառերդ փրկում են փրկում:
Մայրեր խանդակաթ—և քիչ են նրանք,
Որ չունեն գորով և գութ մայրենի—
Ձեզ հետ է ամբողջ հոգուս համակրանք—
Թագունհի-պաշտպան յարկի հայրենի,
Որ բիւր-բիւր չարիք, զրկանք վայրենի
Կրում էք իսէր հատոր զաւակին,
Ապրում էք սիրով դուք անծայրենի,
Կամ սրտով մնում յաւէժ ցաւագին:
Ձքնաղ երևոյթ, պտրծանք բնութեան
Ինքնամոռացման օրինակ վսեմ.
Դու խորհրդանիշ վերածնութեան,
Փայլ տուող կեանքի խաւերին նսեմ...
Բայց, դուք, հայրենի մայրեր, թող լսեմ
Ձեր վէպը, պատմէք հանգարտ էակներ,
Ձեզ հարցնողը, ես նժգեհրս եմ
Շող տւէք ինձ օ մարգարտէ ալիներ:
Երբ բողբոջում են քո գողտրիկ կրծին
Մարսենաժողիկ և հեշտաբոյր վարդ,

Որին նկարել չի կարող վրձին,
Այնքան նազելի, այնքան հրաշագար՝
Դու, մայր պառաւոտ, դո՛ւ մայր մանկա-
մարդ

Նրան¹ խո՛ւմ ես, ուղարկում հեռուն
Որից անուշ հոտ քիչ հասաւ քեզ ցարդ
Սերան² պահում ես խամրուն ու եռուն:
Անբնական կուրծ, օ սիրտ ամայի.
Բերրի հող, որ վաղ դառնալու է մերկ.
Մշակի սրտին էլ ի՞նչ հմայի.
Քո մէջ քրտնաթոր անել վար ու հերկ:
Քո կուրծքը ճեղքւած է արիւննաներկ
Անտերունչ Դաշտիկ—մայր զառամ Հայի...
Այս է դատակնիք, քո Դաշտիկն է լերկ,
Եւ դու պիտ' կոծես կոծեր Ռամայի:
Օ՛ ամազոնեան կին—մար միաստին,
Զմայլեմ ախ քո խանդը սկիւթական...
Աստ կըլսեմ քո տւած փաստին—
Ինչո՞ւ մի ծիծդ այնքան դիւթական
Կտրում ես ինքդ այդ ի՞նչ հոլւթական
Մեկնումն է, աստ—լինի՞ յար ազատ
Նետաձգութիւնդ—անցքդ նիւթական.
Օ՛ խոցում ես միւս ծիծդ հարազատ:
Ծննդավայրիս Մայրութիւն պարկեշտ,
Ախ՛ կուզէի ինձ վիճակէր գրել
Լոկ գեղդ—այս չէ՞ր լինիլ ձեռնարկ հեշտ—

¹) Մասրենածաղկին, որ որդու փոխարէն է առնւած:

²) Հեշտաբոյր վարդին, դստեր » » »

Բայց հարկ է այժմիկ աղէտդ ախր կրել,
Ցաւակից սրտեր հետաքրքրել...
Կաթի տեղ կրծքիցդ արիւն է բղխում,
Խոցերդ ու արիւնդ պէտք է մաքրել,
Լւանամ վէրքերդ, մայր, սիրտս է մխում:
Նիորէ, գլխիդ մահու աստիճան
Տեսնո՞ւս սաստկացող, ջախջախիչ հարւած.
Բախտից և քո իսկ ձեռքերիցդ իջան...
Անյոյս են կրծիդ դստերքդ փարւած.
Նրանց աչքերը դո՛ւր են քեզ լարւած...
Ի՛ այն բողբոջներիդ դու վաղաթառամ
Տեսնում ես ահա սիրագուրկ, ծար'ւած,
Խամրած, դալկահամր ու վաղազառամ—
Մայրութիւն, տօնւում ես դու երկնքում—
Արարչութեան մէջ միշտ նւիրական.
Սուրբ են անունըդ շատ դարեր կնքում,
Լրբենի բերան չեղծի՛ սիրական
Անունըդ: Կուրծքդ այնքան վիրական
Զոհ չեղաւ միայն Եսի սեղանի.
Անիծեալ վիճակն այն անտիրախ
Նոյնպէս հարւածեց քեզ մայր գեղանի:
Տեսչո՞ւմ է որդիդ, ահա սպեղանի
Կազմել իւր հոգու-մտքի ոյժերից.
Տեսչո՞ւմ է նա, որ վէրքիդ դեղ անի.
հիմնական բոյժ—վեր ամեն բոյժերից—
Խառնի՛ր կաթիդ հետ հոգուդ յոյգերից
Գիտակցութիւն և Տղ-Աղջկայ ջամբիր.
Չուլի՛ր բախտը նրանց Ազգիս յոյսերից.
Եւ թէկուզ նժդեհ, վախ չըկայ—ճամբիր:—

Կին-Ամուսին, այժմ քեզ եմ դարձնում
 Երգիս առարկայ. օ քաղցր ամուսին—
 Դառների մասին ես չեմ հարցնում—
 Ձեզ բիւրաւորներ, որ ձեր նամուսին
 Աջալուրջ հակող, ոչ տարտամ ու սին
 Կենցաղ էք վարում—անվախճան յարգանք.
 Ձեզաք ձեր մարդի սրտին կամ ուսին
 Ծանրութիւն—հոգուն՝ օ թախծ, անարգանք,
 Հոգիս խուժում են դէմքեր չքնաղ բիւր,
 Որ հանդիսացան զւարթուն ոգի.
 Կեանքի բերկրութեան մշտահոս աղբիւր,
 Ճնշող բեռները դարձնող փոքրոգի,
 Ազգերի փրկիչ և մայր կաթողի...
 (Ի՛ եթէ քեզ նողկանք չուզես հանդիպի
 Մի ընտրել Սոկրատ, դու արթուն հոգի—
 Ներդաշնակ թերեւ ուր՝ շի—Չանդիպի):
 Օ՛ և որքան է աշխարհս պարտական
 Բիշըր Ստաուներին¹⁾ բարիացնող
 Ի՞նչ հոգեզմայլ է կինը Սպարտական
 Լիօնիդներին արիացնող.
 Դուք Յուդիթ, Եսթեր—ճարի հա ծնող
 Որ փրկէք ամբողջ Ժողովուրդ անճար.
 Բիատրիչէ՛ նոր դարի ան ծնող
 Ներշնչմանդ արդիւնք չէ՞ր Տանդէն—Հանճար:

¹⁾ Mrs. Harrid—Bucher Stowe—հեղինակ «Uncle Toms Cabin»—Թովմաս Եղբոր Տնակի որ վերջացրեց գերեզմանութիւնը:

Եւ դու հայրենի պատմութեան ո՛հ մէջ—
 Արիւնով գրւած, միթէ վեհ կանանց
 Չնաշխարհ դէմքեր պակաս են քո մէջ,
 Որ թողած լինեն փառք և շուք անանց—
 Այն հիւքեր էին, որ բաշ Վարդանանց
 Իրենց սէրն ու սիրտ ձօն ու բաշխ արին,
 Թող կարմիր էջումդ մարդիկ կարդան հանց.
 «Փափկասո՛ւն տիկնայք Հայոց աշխարհին»:
 Եւ դու նորագոյն թարմ էջ մեր ջնջման
 Սև ծրագրի. թող ձայնդ հոսի
 Անվեհեր, պատմիր վեհ, սուրբ ներշնչման
 Վէպը հայ կնոջ—կնոջ հերոսի.
 Թող կոկորդալիւր բերանովդ խօսի
 Սասունի Շաքէն այն սէգ բարձունքից.
 Թող պատմի դիւցազն հայունհին-Սօսի
 Սրտից տոգորւած արիւն արցունքից:
 Բայց ի՞նչ է ասում կոկոզ¹⁾ Եւրոպէն
 Կնոջը, որ ազատ նիստ-կաց է ուզում,
 Որ հասած է զգում ժամն և ըռպէն
 Ծնել խորհուրդը, որ սիրտն է յուզում—
 Հաւասարութիւն և բարձր ուսում...
 Վանդակում պահած իբր տնազ գերի,
 Նէ, կնոջ ձգտման թեւերն է խուզում
 Դայեակ եւեթ է Մայրն ազգերի:
 Ինչ մեծ տարբերոյթ, ինչ հեռանկար...
 Մինչ դարեր առաջ Յոյն, ախ՛ր, կինը
 Ձէր արհամարհում իբր սեռ ան տկաւր,

¹⁾ Հպարտ.

Ունէր իբրեւ մարդ իւր բարձր գինը,
 Եւ երբ յղի էր, այն իւր գրկինը
 Նրան լայն ուղի¹⁾ տալու էր գալիս...
 Նախկին յարգանքի, սիրոյ կրկինը—
 Նէ հայրենիքին պաշտպան չէր տալիս...
 Այժմ դարեր յետոյ, կենսակրթական
 Խրտւիլակները, Զարգացման Մարգից
 Կնոջն են վանում, չէ սա քրդական
 Խժդժութեան այն ցաւալի կարգից,
 Կնոջը ձգել մարդկութեան վարկից...
 Ազգեր, ամօթ, զուր էք դուք հա ճառում...
 Կնոջը բացի 'նտանեկան յարկից
 Ձէք տալիս այլ տեղ այս-այն կաճառում:
 Բայց մի խորհուրդ եմ ես իմանում:
 Սեռերի ծագման առաջին օրից,
 Երբ Արուն դիմում 'ւէգն է դիմանում...
 Երբ Սաղմի կեանքը կախւեց իւր մօրից—
 Գոյտը անզուգական այն խանձարուրից.
 Եւ նէ յանձն առաւ բազմակողմանի
 Վարել այն պաշտօնն անկախ Սերմ-Հօրից
 Նէ դառաւ 'մուսնու կազմ հա հոմանի:
 Նորածիլ կեանքի մինչ դարձաւ դայեակ
 Նէ, խնամելով նրան ինն ամիս,
 Եւ աւելի - նէ թեքւեց աջ ահեակ,
 Միայն թէ նրան տայ՝ ըիւնն հա միս,
 Աննման գիշում, սէր նախամամիս,
 Մինչ հիմք էր դնում նէ իւր Կեանք-Արգանդ

¹⁾ Յունաստանում յղի կնոջ անցնելու ճանապարհ-
 հից մարդիկ պատկառանքով մի կողմ էին քաշում:

Յեղերի Շէնքի—լսիր տրամիս—
 Ներ ամբողջութիւն՝ նա արեց քարքանդ:
 Նէ երկս կեանքի էր սնունդ տալիս—
 Ոչ, ն'էր Ապագայ ամբողջ բեռի տակ,
 Իսկ նա—անբեռն էր, չէր ծնունդ գալիս,
 Հեշտ քաջեց ներան բուռն ձեռի տակ.
 Այսպէս անզօրը հզօր Սեռի տակ...
 Մինչ նէ նոր-կեանքի սիրով մաշ քանդեց
 Իւր կեանքը, վրնջող նա իւր կեռի տակ
 Քաջեց և լիկեց ներան կաշկանդեց:
 Անհոն սէր կնոջ օ գերակայ սէր
 Եւ համբուրելի ջինջ գութ ու գորով,
 Որ եթէ նրան երբէք պակասէր՝
 Կեանքը պիտ լինէր ամուլ անկորով,
 Բայց զարմանք, պատճառն է այս իսկ որով
 Զօրացաւ Այրը—իրաւունք դարձրեց
 Իրեն բիրտ ոյժը և անդխորով
 Կնոջ սիրտ, հոգի, պայման չը հարցրեց:
 Կին-Ամուսին, դու եթէ կողակից,
 Խամաճիկ ես կամ արտօնւած պոռնիկ...
 Իմացիր ես և՛ Ստեղծողակից.
 Քեզնից է բղխում սիրախայծ թոռնիկ...
 Եւ ես սիրում եմ քեզ լոյս կայծոռիկ
 Կոչել բարքի այս մութ գիշերի մէջ
 Ուր կարող է մարդն, երբ երթայ ծուռիկ
 Յոյս նշմարել քո լոյս նիշերի մէջ:
 Ա՛ք քեզ պայազատ, հաւասարակից
 Եւ Այրիդ Քոյր է կարգել բնութիւնը.
 Եւ մարդ անունն է լաւ, հասարակից,

Որին պատկանում է քո կնութիւնը
 Ելիւ Այրիդ-կից—մեռած հնութիւնը—
 Ստրուկի հոգին թող տայ քեզ հրաժեշտ
 Եկել է անուշ վերածնութիւնը,
 «Ամսլ» է կոչում Ձայնը նրա շեշտ:
 Ամսլ ես դու կին, թիսկ կարակինի
 Գծով բոլորչի այն կոնքիցդ ընկնեն
 Բազմաթիւ կեանքեր—չես առաքինի.
 Քածեր կարող են, որ այդչափ ցնկնեն—
 Սրանք բժժանքներ են հազիւ կը գնեն
 Բերկրանք, Ազատ-կեանք: Ձգիր շան սխուր¹⁾
 Սեթկեթանքը ²⁾, թող ոյժերդ ճգնեն
 Առաքինութեան Շքին անտխուր:
 Ի՛ այժմ հայրենիքիս հարսներ չքնադիկ,
 Սիրուն տիպարներ հաւատարմութեան,
 Եւ ձեր մէջ Սիրոյս բերկրաբոյր ծաղիկ,
 Տիպ ազնիւ կեանքի լաւագարմութեան,
 Անունին մատաղ, դաշն թարմութեան—
 Մայրս, Ամուսինս, Քոյրս երանաւէտ—
 Ձեզ—իդձերս կեանքի անընդարմութեան,
 Սէր—երաշխիքս ոհ, ներան յաւէտ:

Գ.

Կոյսեր—բնական աշխարհի բողբոջ
 Թարմ կեանք կրող ձեր փաղփ³⁾ երակներում.

¹⁾ Շնութեան վարձ:

²⁾ Աւելորդ զարգարանք:

³⁾ Փայլ, փայլուն:

Որ սպասում էք ջերմ հողմիկ դողդոջ
 Ձգի թրթիռ այն աղբերակներում,
 Որ կան սրտներիդ այն վեր ակներում,
 Բողբոջներ, որոնք մնալ անփթիթ
 Ձէք սիրում երբէք աւերակներում
 Մենիկ, չէք սիրում մնալ անքթիթ:
 Ներշնչման անոյշ Աղբիւրներ ասուն,
 Կեանքը դարձնող հեշտավայր դալար.
 Որ երբեմն լուռ, երբեմն երազուն
 Տալիս էք սրտի սիրատենչ գալար
 Եւ ո՞վ ձեր շուրթը կակաչ կարմրալար,
 Ձեր մարմար լանջքի, երազն աչքերի
 Տեսաւ և սրտում չունեցաւ պալար—
 Կարօտ դառնալու ձեզ քմ'հաճ գերի:
 Բերկրահոտ վարդեր, որ դաշն Սոխակի
 Դայլայլիկներով սիրում էք հրճել,
 Որ սիրում էք Շաղն այն անցողակի
 Ընդունել զովիկ և թրջւել, թրջւել...
 Եւ թոյլ կըտայիք սրան մխրճել
 Ձեր բաժակների քնքուշ ալքերում
 Եւ կըներէիք Արբշիւն լրջւել
 Ձեր սաղարթների շքեղ ծալքերում:
 Անոյշ երազներ, բախտի, Շնորհքի,
 Ասպետ-սրտերը օրօրող ընդմիշտ.
 Իրականացող կեանքի ցնորքի,
 Գերերջանկութեան, բերկրութեան անվիշտ...
 Եւ երանի թէ աշխարհս այս դիշտ,
 Վայել փայփայանք ձեզ չըզլանայ,
 Օ՛ երանի թէ ըմբռնէր նա ձիշտ,

Որ ձեզ հետ որքան վեր կըսլանայ:
 Բայց ես իմ Ազգի ցաւած կոյսերին
 Եմ նւիրում իմ երգն ու քնար.
 Համակիր նրանց դաւած յոյսերին.
 Հոգիս էլ ի՞նչ է, որ գործել չըզնար,
 Սիրտըս ի՞նչ է որ չը դարձնի հնար.
 Դէ Հայրենունիս մատաղ քո սրտին,
 Հնչում է Ձայնը, թմրած մի մար,
 «Տալիթա կումի» — կեանքի խորհրդին:
 Կեանքի խորհրդին դու ուշք դարձրու,
 «Լինի՛-չլի՛նի՛, Լինչո՛ւ նէ լինի՛»,
 Հոգուդ խորքերից դու լուրջ հարցրու.
 Եւ գուցէ վաղուց սուր զմեկինի...
 Պէս ծակեց անո, սիրտն իմ էմէլինի...
 Հարցրո՛ւ տես ձայն չէ գալիս ներքին —
 «Լինի՛ նէ թէկուզ պէս Յոյն Հէլինի —
 Բայց ն'է պիտ' մարդին տանի դէպ երկին»:
 Սակայն մի այլ ձայն է գալիս հանդարտ,
 Երեսուն հնգից 'քառսուն հինգ աշուն
 Ձմեռ դարձրած կուսութիւնն անթարթ,
 Լռիկ նայում է, հծծում է մաշուն,
 «Ախ վայ իմ սրտին, քա՛ վայ իմ կաշուն,
 Աշխարհ ինձ աստ վայ անբան հոգուդ,
 Ինձնից անարգւած աւելի կայ շուն,
 Չարքաշ գոյութեամբ անցնող անօգուտ:
 Ախ անէծք, անէծք նրանց, որ պատճառ
 Դարձան աւերի այսքան ահագին,
 Ծնողներ, երկար բերաններդ վատ ձառ
 Կրկնեցին, խօսքով դուք տալ մահագին

Կարծեցիք, արժան վրէժի մահակին,
 Էլ ամօթի ջուր կայ ձեր երեսին
 Ո՛ւր են որդիքդ աստ Ահա կին
 Քո — Դուստրը, զո՛հ ձեր վատշէր Եսին:
 Եւ մենք անձնական, ոչ ոճիր, յանցանք
 Գործած լինելով դիմում ենք լուռ-մուռ
 Կեանքի միւս ծայրը, լռիկ մենք անցանք
 Անյայտից այս կողմ-Յոյսի բացւած դուռ
 Երբեմն Անթառամ, այժմ տխրավարս ուռ
 Արիւն ենք լալիս ու գնում անյուշ.
 Մենք սովորեցինք չըկրել սարսուռ
 Լքումից, բաւ չէ՞ր մեր երազն անուշ:
 Հրաժեշտ ծնողներ, հրաժեշտ և ներում
 Հրաժեշտ քեզ եղբայր այն կողմում ծովի.
 Սևուկ թռչուններ մեր տերևներում
 Թերևս բոյն շինեն — ձար սիրոյ սովի...
 Այն օտար շունչը հրապուրիչ հովի,
 Որ քշեց քեզ դէպ շահատակութիւն
 Բերեց ինձ Քրոջդ, մահ ոչ-ընտրովի,
 Ամօթ, ամուլ կեանք նահատակութիւն:
 Կատարեց. իջնում է վարագոյրդ
 Թշառիկ դու բեմ դժբախտ դրամայի.
 Ուշք արա Եղբայր, ուշք արա՛ Քոյրդ
 Թողեց կեանքի բեմն աւեր ամայի.
 Եւ լսում է ձայն նման Ռամայի.
 «Աւաղ Հայունի պարկեշտ Զոհերին.
 Յարգանք թող խիղճը նրանց հրամայի.
 Թող յաւէրժ տիրեն՝ ըանք մեր խոհերին,
 Թող նրանց ընդհատող հեկեկանքները

Սարսուռ ազդեն մեր հոգու լարերին.
Թող նրանց վհատող հեծեծանքները
Մղձաւանջ լինեն սրտով չարերին,
Սպառնան նրանք եկող դարերին
Ուրւականներով զսպւած խանդերի,
Թող նրանք դրոշմեն մտքի քարերին—
Բնութեան նեմեսիսն է յաղթ անթերի»:

Դ.

Նոր լար եմ խփում հասուն կուսութեան...
Քսան հինգ գարունից եր'սուն հինգ ամառ
Քաղցրիկ Յոյսերի, դառն Անյուսութեան
Պայքարը մղող Մարտկուհի՛ յամառ,
Կեանքի խնձոյքից, եկ դու նոր համ առ.
Կեանքի խնձոյքում դու մի՛ Սէրդ կաւատ
Դարձնել Սեռի—անել տուր կամ առ.
Այն կայ Սէր բայց և Յոյս և Հաւատ:
Սէրը չի կեանքիդ վրայ արեթ եւեթ.
Որ դիւրին վառի խարոյկը տրփին¹⁾
Սէրը չի կեանքիդ թեթև սեթևեթ,
Որ ցոյց տաս նրան պատահած լրբին.
Սէրն է կեանքի այն բոյսը նրբին,
Որ Սրտին Հոգուն փակչում է սեղմիկ.
Սէրն է—սուրբ և պիտ' դիմել այն սրբին,
Որ մաքրի արիւն և խոցեր մեղմիկ,
Սէրն է բոց, նրանով օջախի կրակ
է վառում տաքուկ—այս դու պնդիր է.

¹⁾ Յանկութեան.


Բայց երբ այս չըկայ—նրանով ճրագ—
Ուսման ճրագը վառել ընտիր է.
Ուսման ճրագով, Քոյր ունկնդիր է
Դու պիտի գնաս և անձդ փրկես,
Եւ թէ քո հոգին հարցախնդիր է,
Դու Անկախութեան դրօշ պիտ' գրկես:
Այսպիսի սիրոյ սիրտդ նւիրւած,
Եւ մի մոռնար, որ յոյսեր տածես
Հերոս-Հանճարի մայր լինել սիրւած.
Հաւատքի մտքով ապա կը մտածես
Թէ ինչպէս Հոգուդ հետ խորհրդածես...
Մարդկային կոչմանդ վայել կեանք վարել...
Յուսալից-Հոգուով զգա՛, կոչւած ես
Քեզ և Աշխարհին իսկ բարբերարել.
Դէ՛ փարւիր, Քոյրիկ, Գրքին ու Գրչին
Եւ, հաւատա՛ ինձ սիրտդ կրբերկրի.
Եւ քո այն քնքուշ կրքին ու կրծին
Ասա Ազգի և ընդհանուր երկրի
Դառն աղէտներ, դառն ցաւեր կրի.
Խիղախ Ուօլստոնքրաֆտ¹⁾ և նոր Նայաընգել²⁾
Դարձած թող ձեռքդ ցնցող գրքեր գրի.
«Ի՞նչ կասեն մարդիկ» խրտւիլն է ընկել:
Եւ մինչ հեռաւոր քոյրդ Սիւֆրէժուհի
Դառնալով է իւր կեանք ուղին հարթում
Դու նախատինքիդ արգար վրէժուհի,

¹⁾ Անգլիուհի, որ գրեց The Rights of woman տես—
18 երոբդ դարում.

²⁾ Անգլիուհի, որ հիմնադրի եղաւ Կարմիր Նաչի
և այլ Բարեգործական Ընկերութիւնների:

54049-66

ВИБРА...
ИНСТИТУТ
ДОСТОПОВЕДЕН
Академия На
СССР



Անմահ Մատեաններ թող լինես կարգում...
Դու կ'լինես տմարդ եղբօրդ վրայ բարդում
Կրակի կայծեր—կեանքդ այսպէս փոխիր—
Աղանիդ՝ Արծիւ մի ահնթարթում.
Իսկ թէ ոչ Յոյսերդ տես մարած, մոխիր...

2.5.^{1/3}

Ը.

Ես, որ քիչ առաջ իմ այն Քոյրերին—
Վարդենիներին անվարդ երգեցի,
Պաշարմունքներին—(նրանց բոյրերին
Ժահաբեր) այն խիտ սէղը բերքեցի—
Նոր մշակութեան արտեր հերկեցի,—
Վշտի և Յոյսի բացայ լայն ահօս,
Սեռի վրէժի արնով ներկեցի,
Որ կեանքի ծառը գոնէ չը մնայ գօս՝
Ահա դառնում եմ մի գուրդուրալի
Նոր Բուրաստանի մէջ երեւ գալու,
Ուր քաղցր ու անոյշ հոտով բուրալի
Ծաղկունք են պճնում դրախտի հոտ տալու,
Ուր չի սպառնում Ամպն որոտալու—
Միրում եմ յուսալ—մռայլ եթերից,
Ուր չի ստիպւել պուէտը լալու
Թէկուզ մի հատը նրանց թերթերից:
Զքնաղ Բուրաստան իմ բնաշխարհիկ
Հոյլ-հոյլ մաքրափայլ, համեստիկ տունկեր—
Հայոց Աղջիկներ, դուք չնաշխարհիկ
Որ բուրում էք զերդ հեշտաշունչ խունկեր—

Հագիւ թէ ձեր մէջ լինեն գէշ սունկեր—
Դէ տասնհնգից մինչ քսանհինգ գարուն
Գոյն, բոյր, գեղ սփռող, կենեղուտ ծունկեր
Կրող դալարներ հոյզով պատարուն,
Եկէք և թող ես ձեր կենսաթրթիւ
Ճարճատից առնեմ սիրահրաւէր յանգ,
Եկէք խոլորձներ պէսպէսագրգիւ
Վարդ, Շուշան, Յասմիկ, Հարսնուկ կար-
մրերանգ,

Եկէք հեզանազ յուշիկ երերանք
Կենսակրթութեան Հովից, սոյլերից,
Ես կըկատարեմ ձեզ հետ դեզերանք.
Չայն տէք դուք ձեր թովիչ բոյլերից:
Դու ծաղիկների Դշխոյ, շքեղ Վարդ—
Ունի՝ հովերի հանդէպ բացխփիկ,
Թերերդ կուսական գերդ մագեր բարդ-բարդ,
Բազմալիք ժպտուն ու գեղածփիկ.
Հրաշալի վարդուն, տենչալի թփիկ
• Ինչո՞ւ հրաւիրում ես մարդ-թիթեռիդ...
Մինչ շուրջդ լի են փշեր ու տփիկ—
Ձեն թողնում նրան մօտ վարդի թերկդ:
Քմահաճ վարդուն, որ սուր փշերը
Միամտօրէն քեզ զէնք ես կարծում.
Եւ մինչդեռ գունեան այն հուր թշերդ
Սոխակ-Մեղւի մէջ խանդ են արծարծում՝
Դու յապաղում ես մինչև Համբարձում
Նրանց մօտ գալը ճիւղիդ բաժակիդ.
Օ՜ լսիր դու ինձ, թող տամ մի հարցում—
Վարդավառն է յարմար ճաշակիդ...

Եկ', ես Այգեպան, Յօտոցով փորձի
 Թափեմ փշերըդ այժմ անդիւրեկան.¹⁾
 Հիւթերդ սպասում են առատ գործի,
 Եւ բիւր մեղուներ ահա հիւր եկան
 Քո մէջ գտնելու անոյշ «Eureka»-ն ¹⁾
 Թող մէկը ծծի կենսունակ հիւթը
 Վեհ սիրոյ ծաղկիդ, թէ ե բիւրեր կան
 Բոռեր... Օ՛ դիտեա վարդ սրա նիւթը...
 Բայց ես ինչ-որ վարդ քաղելուց առաջ
 Նրա փշերից եմ խրատ քաղում,
 Փշեր տալիս էք, ճիշտ է մեզ հառաչ—
 Վարդի վայելքին տալիս յապաղում..
 Ձեռքեր արիւնով խոցում ճապաղում,
 Բայց Յապաղումն է, որ վարդի վրայ բոյր
 է աւելացնում, Տենչի հետ խաղում.
 Տալիս հեշտանքի աճուն հրապոյր:
 Շուշան, երջանիկ ես, ինձ ասա դու
 Այն քո բաժակի ձիւնեղէն շողով,
 Անմեղութիւնը, ապուշ դասատու,
 Քեզ լցրեց ինչքան ցնդելի ցօղով.
 Այնքան պաղ մինչ ինձ լցնում ես դողով,
 Մի՞թէ քնքշանքըդ պիտի յար տայ շուք
 Շիրիմի. մի՞թէ դամբանի հողով
 Սնեցիր, ջրէց վեղ միթ' արտասուք:
 Թո՛ղ շամբուտ ափեր, թող դանդաղ ճախին.
 Ինչպէս ջրշուշան աճիր դու լճում,

¹⁾ «Իւրէկա» «Իւրէկա» գոչեց Արք'միդէսը երբ յայտ-
 նի գիւտն արեց:

Թագունի և ոչ շամբի Աղախին,
 Որ հիւանդ ծունկով է ընդմիշտ գճում,
 Ջրշուշան, որի շուրջն է քչքչում
 Թարմ Հոսանքների ճողփիւնն ու կարմալ,
 Կարապը լանջեղ կեանք է ներշնչում—
 Դառնում փեսայիկ սիրով անպարապ.
 Յասմիկ, քնքշերամ ու գեղափնջիկ,
 Ծայրերով կապոյտ, թերթերի հոյլ հոյլ
 Երկինքը նայող շքեղ ա մնջիկ...
 Իսկ խորոպներով վարը հրանշոյլ
 Երկրին միացած ոստերով բոյլ-բոյլ
 Ծծիր, դու ինքնին լի բուրաստան, բոյր...
 Նոր կեանքի զարնան զեփիւռիկն ու սոյլ
 Թո՛ղ պարգեկն քեզ և գոյն և համբոյր:
 Թո՛ղ նրանք և բնիկ Արևդ ու Ակօս
 Սաունդ պարգեկն քեզ և դու շարժւիր
 Փոթորիկին, ազատ, դէն թող գնայ դօս
 Փայտն օտար, առանց նեցուկի վարժւիր
 Հեռու այն լպիրժ Շաքիլից քարշւիր,
 Որ ուզում է քո ոսկի ծամերի
 Հետ սեղեխանալ, Յասմիկ օ հաշւիր
 Խոպուպիդ աճման ճիգը ժամերի:
 Յասմիկ սպիտակ, դստրիկ նարկիզի,
 Անբիծ երազուն արբեցնող բաժակ.
 Դու արժանի չէս մի մեծ մարկիզի
 Հինել Ապիզակ ¹⁾, գեղունի խաժակ.
 Դո՛ւ որ դրախտի տալիս ես ճաշակ,
 Սիրոյ խոցւածին օ բալասան հիւթ
 Դո՛ւ, որի հոտից թէ կուզ մի Բալզակ

¹⁾ Կրճքի զարդ:

Տոբիկից վեր կենի դէպի սէր աննիւթ:
 Բուրբիւր ու փթթիւր Յասմիկ, շեր սէր իմ,
 Բաց է քո առաջ և պալատ և հիւղ
 Հոգու Տաճարում լռիկ սէրսէրիմ¹⁾
 Սրտի սրահում դափնիք դու շիւղ,
 Օ՛ ձգիր ճապուկ ծղիներդ ընծիւղ.
 Այժմ հասարակաց Ատաղծի վրայ
 Ի՞նչ հարկ սոսկ Մեղւի տալու անուշ իւղ,
 Եղիւր Հովանի— Սարգենին նրա:
 Հարսնուկ-կարմրեանդ, մինչ փայփայում է
 Քեզ Սէրոն-սիրար²⁾ ու գէն սլանում,
 Պշրունու նազանքդ ա՛ քայքայում է
 Եւ գնում անլուր տեղեր խլանում,
 Ամօթլեածութեան փոշիդ կլանում,
 Դու ի՞նչ ես անում Հարսնուկ թերթախախտ,
 Աշխարհս քեզ ուշք տալ է զլանում
 Նրան խորշելի ես դու գերթ, ախ, ախտ:
 Ասեմ, Հարսնուկ, դու Պուտ ու Կակաչին
 Յանձնիր հրատապ դատը քո արդար,
 Նրանք Այտի դիւթմամբ այն տղա-քաջին
 Կը հրապուրեն շպարով ճարտար,
 Կը դարձնեն նրան ցրիւ անյարդար,
 Օ՛ կըտան նրան անուրջ, հա թմբեր.
 Կուղարկեն գիրկը Մորփեւսի տաճար.
 Հարսնուկ ոյժերըդ այժմ համախմբիր:
 Մանուշակ համեստ, դու սիրուն Մանուշ
 Որ սովորել ես մնալ միշտ անտես.

¹⁾ Երգ-երգոց գիրքը: ²⁾ Զով քամի:

Ախ բուրմունքդ, համ անգուսպ համ անուշ,
 Քեզ, ուր էլ լինես, բերում է հանդէս,
 Ե՛րբ քո թփայլն պատւարդ կը քանդես
 Ծիրանի Մանուշ, թէ՛ ցածր թաքուն
 Այլ անշուշտ յուզւած ու սիրախանդ ես,
 Ե՛րագուն, մտած ցնորքի քաղցրաքուն:
 Թող փշի Զեփիւռ, թող շնչի էրան, ¹⁾
 Իշխանուն լռին սուերոտ վայրի
 Բո թաքստոցից ձայն տուր դու ներան,
 Մի՛ մնար ինչպէս հոգեխռով այրի
 Մի՛ երկիւղ կրիւր թ՛ Արեգը կայրի
 Նրբերակ ուղէշդ.— քեզ, ծաղիկ— Հոսիւթ
 Մի՛ բոոս անշուշտ վիճակից վայրի
 Կառնի կը քամի անուշ բուրանիւթ:
 Նարդոս, գեղեցկի Զղջման տիպ— Ծաղիկ
 Որից վարարը քամեց ջինջ ու պարզ
 Սրբի ոտքերին անկեղծիկ շաղիկ,
 Դու չէս ինքդ մի կապոյտ լիււած հարս,
 Թրջուն թերերով— լացով խռկւած վարս.
 Խէնէշի՛ ոտք ես սակայն դու թրջում—
 Հնութեան փոշուց մաքրում— սրտի մարզ
 Ոռոգում Յոյսի-Սիրոյ դրախտ շրջում:
 Մ՛մբուլ և Հերիկ, հիասքանչ Յակինթ,
 Եկէք Նարդոսի բոյրեր դուք ծաւի,
 Մայր մարգագետին դուք ականջադինդ..
 Մինչ բիրտ Զեռք ձեզ այն տեղից զրաւի,
 Մինչ սիրտ-վէրք ձեր այդ գեղից զրաւի,

¹⁾ Մեղմ, անուշ հով.

Հծծէք, շշնջէք անթառամ բուրէք,

Արհամարհէք դուք ամեն քուք ¹⁾ ցաւի
Ձեզ խող ձեռքերն երբէք համբուրէք:

Աղբերաց—Արիւն դու մակաբուսիկ.

Որ թողած հողի գիրկն ու հովիտ

Աճում ես օտար կոճղում խաբուսիկ.

Գիտեմ պատճառը քո հողի-սովիդ.

Գիտեմ ապաժոյժն այն պատող ծովիդ.

Սարբնայի վայել, ինքնին սարփինա,

Արժանի որ գովքդ երգէ մի ճվիդ

Թոշնում ես մենիկ տապից տարփի, նա:

Ձէ, բոսորագեղդ տևիր օդասուն

Բուրել անման ծաղիկ հայրենի,

Պճնիր դու ամեն առաւօտ հասուն,

Ձարդարւիր շքով սրտի մայրենի,

Վիճակդ երկար չի տևիլ վայրենի—

Թէ կուզ օտար սիրտ դու կը հրապուրես—

Քեզ գգւել, շոյել... սէր անծայրենի—

Ինչ փոյթ է օտար սրտի վրայ բուրես:

Ախրիզան պարկեշտ, իմ չքնաղ սէր եկ.

Գիշերաբուրիկ և բուրկէն ծաղիկ

Ինչո՞ւ մինչդեռ չի ծագել Աստղն-Երեկ

Մհում, վարում ես ամուր կենցաղիկ,

Ոհ մինչ չես ծծում ցօղագին շաղիկ,

Ինչքան պուրատած է քո վրան ունք

Ու թերն երևում—ուղղակի ցախիկ,

Կամ թէ դալկահար ինչպէս հրանունի:

¹⁾ Հառաչանք.

Ամօթ-գեշ Ախրիշ և Հօրօտ-Մօրօտ

Եկէք, Ասպուզան, Ծեփիկ ու Քրքում

Մերուշն, Սմնակ և դու Ճ՛շնարօտ,

Ոմանցդ պահ տամ յուշերի գրքում,

Ոմանցդ ահ տամ փուշերի գրկում,

Ուր թէ և դառնան գոյներդ անօր,

Ուր թէ և դժնիկ պատեն է լիկում,

Գթած Աչքը ձեզ կը տայ շաղ-Արտօտ:

Վահշիժակ, Վերվին, ինձ—մի—մոռանար,

Մեխակ, Համասպրամ, սիրուն Մարգրտիկ,

Հազրեվարդ... Օ՛ թող աչքս քոռանար

Ձը տեսնէր, որ ձեր մէջը կայ սրտիկ,

Որին սպառնում է լքման ցրտիկ...

Ա՛խ, օն շուտ ձեզնից հիւսել սկսես

Պսակ դափնեմուրտ—այս է խորհրդիկ—

Հայ վերածնունդու ճակատին վսեմ:

Հայ վերածնութեան Տաճարին դրասանդ

Եկէք բոլորէք դուք ուսման Արօտ

Շրջած ծաղիկներ, յուսահոտ, հրազանդ,

Եկէք ոլորէք Ասպետի նարօտ,

Փոխադարձ հոգու դուք իրար կարօտ:

Եւ ես երգում եմ, որ դուք համերաշխ

Կուռճացնէք հայի կեանքը քարքարոտ

Քան Տիգրիս, Եփրատ, Ճորոխ կամ Երասխ:

2.

Ա՛ շխոյժ, ինչ բո՛ւռն ես. չես տալիս հանգիստ

Քեզ կրող այս խեղճ լիկած անօթին...

Ա՛ շխոյժ ինչ խուռն ես խուժում ինչքան խիստ

Մղում ինձ խնդրել այն Անծանօթին...
 Ախ այս յոգնատանջ ախոնդանոտին.
 Ո՛ր Հոգին յօժար՝ Մարմինն, ա՛, տկար,
 Ի՜նչ սիրայորդոր այն ծածան օդին
 Աշխոյժ, հրաւիրում ես գեղանկար:
 Գալիս ես, ռւր ես առոյգ իմ Պեգաս.
 Առ ինձ քո թիկնեղ հեշտօրօր նուսին.
 Բելեր՝ ֆօն, հերիք անժոյժ հեկեկաս.
 Ծծիր Աղբիւրից և տես այն կուսին,
 Որի շէկ թոյրը, վառ արշալուսին,
 Համակրանքի երփնով քեզ ցօղեց.
 Որի կենսատու սափորն ուսին
 Սրաիդ Երաշտը Սիրով ողողեց:
 Եկաւ պեգասոսն, իմ աննման ձին.
 Եւ մենք կըսլանանք Միջավայր ազատ.
 Մենք հլու միայն պատշաճի սանձին՝
 Կըսաւառնենք այն տարրում հարազատ:
 Թեւերիդ թափը, ահա նոր նազատ ¹⁾
 Կրկնապատկում է... Բայց օ մոռացօ՛նք...
 Մանկիկը գուշակ, սիրուն պայազատ
 Պեգասիս դարձրեց ակնկորած յօնք:
 Չէ. եկ դու խարտեաշ, չէ՛ եկ գանգուրիկ
 Չէ՛ որ Պեգասի, նախ սօսաւիւնը,
 Դու նշմարեցիր, հրաշագան քուրիկ,
 Դու ներշնչեցիր Երոս ²⁾ — աւիւնը,
 Արփիաթեին — վատ խոսսափիւնը
 Հեռու վանեցիր — գռնհիկ — գեղջուկի
 Հենգնոտ գետնաքարշ և խուժ ա՛ւիւնը

¹⁾ Մի տեսակ հով. ²⁾ Սէր.

Դեղաթափ արիւր — փրկանք խեղճուկի:
 Ախ հազիւ թէ ժամ և ըոպէ լինի
 Որ ես չըլինեմ ձեզ վրայ մտորում
 Հայրենի կոյսեր: Այս Յոբելինի ¹⁾
 Նախօրեակին, իմ սրտումը թորում
 Է արիւն. ինձ նոր գործի յորդորում.
 Եւ այն արիւնով ես քիչ գրեցի...
 Եւ նա դեռ հոգուս քիչ է պղտորում...
 Իսկ ես կըկրեմ ինչպէս կրեցի:
 Բայց պիտ' մի վայրկեան ես տամ քեզ հրաժեշտ,
 Իմ տրտում տաւիղ և սրինգ թեթև
 Առնեմ և դառնամ զւարթ երաժիշտ,
 Հնգից — տասնհինգ տարւայ ոգեթև
 Իմ թռչնակների. սիրուն եւեթ, և
 Ձայն կը տամ նրանց, նրանք ճախրայոյս
 Թող թռչեն թեթև թևով անգեղև, ²⁾
 Ճուռողեն աղու և կենսախրախոյս:
 — Սոխակ — «թիւի ցուհի թիւի ցուհի.
 Երգն է ինձ համար և խաղ ու դայլայլ,
 Վարժուհն ինձ համար — սիրուն դիցունի,
 Պարտէզը՝ տաճար, ուր ես յամրաքայլ —
 Արշալոյսի հետ գրկւած կարմրափայլ...
 Հնկերս է թեթև բլբուլիկ հովիկ —
 Որին գրկում եմ սիրում շուտ այլ, այլ...
 Երբ փարւում է ինձ նրբուլիկ զովիկ:
 Ինչ անհոն է այն ծովը վերնի,

¹⁾ Հայ Գրերի-գիւտի և տպագրութեան:

²⁾ Անշարժ հաստատուն:

Կապուտանկ. օխ այն փրփուրը ճերմակ—
 Նրանց մէջ կուգէի, հովը տերևի
 Վրայ տանէր տար ինձ փափուկ վերմակ—
 Այնտեղ բունէի ես տաքուկ— ջերմակ,
 Ինչպէս մայրիկիս անուշ ծծի տակ,
 Երբ ծիծղում ծծում էի ես գերմակ
 Հպարտ ընկած այն անուշ լծի տակ:
 Արտոյտ, դո՛ւ ոգի երեքուն ամպից
 Ցօղում ես երգի զո՛վ բիւրեղ հեղուկ,
 Իսկ ո՞վ է տեսնում քեզ հեռուն ամբիծ...
 Աշխարհս քեզ համար— օ ինչ տեղ նեղուկ.
 Ո՞վ է նշմարում քո գեղն եղևիկ,
 Ճախրում ես երգում, երգում ու ճախրում,
 Ճո ճիճո ճիճո-ձայնում յեղյեղուկ
 Օ՛ բուրաստանին հերքում ու ծաղրում:
 Յանդուգն թռիչք պարզէք դուք ան բիւր
 Նրա պէս մրգուզ ¹⁾ ծիծառ ու թիթեռ
 Կարծես ձեզ համար չէ վարի աղբիւր
 Ձեր հագագը կուտ չըպիտ' ուտի դեռ
 Դուք պէտք է ծծէք դեռ այն լուրթ-իթեր ²⁾—
 Պարզ, յստակ, թեթև, ճիճո ճիճո ճի...
 Եւ գերաշխարհիկ ձեր այդ շուրթի թեր—
 Սրտալիւր երգը մեր սրտին թռչի:
 Դեղձանիկ.— ճւ, ճւ, ճւ ճւի ճւի—
 Ես իմ ոսկեփեղկ այս օ վանդակում
 Ներում եմ ծախն որ հրճւի, չւի
 Ազատ ուր արկածն է բովանդակում.

¹⁾ Աննշան: — ²⁾ Պարզ օղ:

Չարաթև Դև-ծիտ չէ՞ս օժանդակում,
 Որ իմ անձկալի սրտիկն էլ հրճւի.
 Ճւ ճւ-ճր-ճր-ճր. մեզ այլանդակում
 է փակումը, թող քո սիրտը լըջւի:
 — Մենք ու Տորդիկը լանջով կամրախայտ,
 Մենիկ բունիկում ֆնջիկ վարանած,
 Մերթ իրար ըղձում ենք տալ համր անխ այտ,
 Եւ մերթ սպասում Բաղին դարանած,
 Մեր փետուրները վեր ու վար հանած,
 Ճւի - ճւի ճւ. բայց ահա շողը
 Մեղմացնում է մեր կեանքը պարանած
 Մեզ նոր նւագ է տւել «Աշուղը»:
 Հաւփալիկ— «Գու գու քու քու քու, գու գու,
 Ես վայրի թռչուն, ոչ մի գսպի տակ.
 Գոհ, սակայն ողբում եմ հատոր հոգու
 Այն Շուշանիկի թօշնումս սպիտակ.
 Փոշեթափումը դեզ պարսպի տակ.
 Բայց ես թռչում եմ ֆնջում իմ «քու, քուն»
 Որ Այգեթողին, աներես, պիտակ ¹⁾
 Ձը թողնեմ այլևս քնի մահու քուն:
 Եւ ես ֆնջում եմ: Ոսկեփաղփ, աղու,
 Ձեմ ես Աղաւնեակ այլ սոսկ Հաւփալիկ,
 Բայց կարծես զգում եմ որ «բաղբաղու»
 Վարուժանից պէտք է մարուն լալիկ,
 Բայց այս մի երգ է անուշ դեռ գալիք
 Ես կերգեմ դաշտի, բնութեան նւագներ—
 Իմ նւագը չի այժմ սարսափ ու լալիք

¹⁾ Խորթ, օտար:

Քամու՛մ ինչպէս Դաշն Բիթովէն, Վագնէր:
 Յոպոպ — «Եւ անհոգ նս հերախոպոպ
 Կը հիւսեմ գլխիս կըտամ ընդ միշտ սանր.
 Հոպոպոպոպոպ — Հոպոպոպոպոպոպ.
 Սիրուն գարգամանակ իմ սեռին ընդհան'ր.
 Հեռո՛ւ թող ծամեր սարսուռտ ու մանր
 Ձերդ Մեղուսայի մագերն օձային.
 Կեսրական անէծք դու չես այնքան ծանր
 Ինչքան Յոպոպի յափրանք ծոցային:
 Եւ նաշխուն թեք, բբուկ հովանի
 Պարզած կըթռչեմ հերարձակ անքօղ.
 Օրհնեալ ժամանակ. պարզն է գովանի
 Եւ ոչ հազար ու մի պաճուճանք, օղ
 Կեանքի և տեսքին այնքան վտանգող.
 Դուք ցցունազարդ լորիկներ բոլոր
 Ասէք, լսւ է այս կամ թէ ինչ. տանք հող
 Մեր գլխին — Հօպ — հօպ վարսեր հեշտուոր:
 Սարեկ — «Սրբւր, սրբւր սար ա՛ ճշի
 Շճի շճ շճի սրբւր սրբւր «Դու սեիկ
 Գոյնով անախորժ ու չարաճճի
 Ես սակայն աշխոյժ ու բարեձեիկ,
 Ճախրում ես վերեւ — ներքե թեթևիկ,
 Դու այն թեւաւոր Երաժիշտների
 Խմբի ետեին ամփոփած թեիկ,
 Կամ թէ մի վերջին սև նաժիշտների
 Պակաս ես անուշ, սուսիկ հա փուսիկ
 Զիդ տալիս ձայնին դարձնում ոլոր շեշտ.
 Կամ ինչպէս միանձն — ուհի խաբուսիկ,
 Զլերգակների դաշնակն որոշ, հեշտ

Ձե՛ս շինում, չե՛ս դու մի խազ անհրաժեշտ...
 Բայց էհ սիրում ես անփառատենչիկ
 Մնալ անծանօթ և քո վրայ շեշտ,
 Ձուսպ դնել խեղդել Եսի ամեն ճիկ:
 Յախսարեկ, Տեսէք իմ այնքան փոքրիկ
 Ձետը հանգրիճած,¹⁾ պուտած վերև,
 Ընկերներին հետ — կապուտիկ, մոխրիկ,
 Այցում ենք ամեն ծառ, ծաղիկ, տերև
 Եւ մեր ձայներն իսկ չեն լինում դերև,
 ԶԼ-ճԼ-ճԼ-ճԼ-ճԼ — վո՛ւ սվո՛ւ սվո՛ւ
 Անթրթռուն ձայն է բայց յաղթ, թերևս,
 Ինչպէս խնծղալի սուլիչ ու շուռ:
 Ծիծեռնակ — թռչնիկ, կարօտ նժդեհիկ
 Այժմ դու ճուղիլը, քնքուշ, հեզ, երզի
 Յօղի գեղումովդ սրտի հրդեհիկ
 Մարի՛ր, դու մարի՛ր օ տիեզերքի
 Տխրութեան ձայնիկ և ցաւի, վէրքի.
 Մատաղ ձայնիկիդ այն մեղամաղճիկ,
 Մատաղ այդ հոգու դաշնակիդ ներքի,
 Որի շուրջը կայ բազմերամ Աղջիկ:
 «Ծիճու ճղու՛ն ճիւսի՛ ճԼ ճԼ ճԼ ճԼ ճո՛ւռ
 Ինչ^օ, սրտայոյզ չէ՛ ամեն մի պանդուխտ
 Լսում մեր երգը և զգում սարսուռ...
 Մինչ մենք մենիկ ենք ինչպէս կոյս Սան-
 դուխտ,
 Այն նոր հաւատքի յաւէժ անքանդ ուխտ
 Ընտրած — Շարժնութեան թռիչք ենք պարզում.

¹⁾ Հաւաքած:

Նոր Սահականդուխտ և նոր Շահանդուխտ
 Մենք ձայն ու զրի ձիրքեր ենք մարդու՝
 Դէ սիրասլաց թռէք, պիտ թռչէք
 Յեղափոխիկներ և մենք զաղթական
 Թև կըտանք թելի և դուք կը շրջէք
 Նոր Հորիզոններ - մեզնով յաղթական.
 Մենք զգաստութեան յոյզ Անհատական
 Ձեզ կը ներշնչենք և վշտի բովում
 Այրած մեր եսի թախիծն ախտական՝
 Կընկղմենք Ազգի փրկութեան ծովում:
 Եւ դեռ սիրունիկ այլ շատ թռչուններ
 Կան - Սալամբն անուշ, Կարմրալանջ, Տարմ-
 հաւ—

Ոմանք ընտանի, ոմանք շրջուններ,
 Դեղնուկ, Ալկիսն, Խայտիտ ու Արմաւ,
 Որոնք սրտագին ու հաւատարմաւ
 Յայտնում են ձայն ու թռիչք և գոյն պերճ.
 Բայց գիտեմ ես մի չճնադադարմ հաւ,
 Որի զրւագով կըտամ երգիս վերջ:
 Փիւնիկ, այդ դժիւ ես անձայն, անկաշիւն,
 Դու՝ խորհրդաւոր ինձ աստ Փիւնիկ,
 Դժիւ քո ծնողն ես և դժիւ քո աճիւն,
 Թէ այլ մի Սիրոյ թռչուն, արիւնիկ
 Խառնեց մոխիրիդ—Հանձարի ձիւնիկ,
 Որից խմորեց զալի ծագումի
 Կաւըդ:—Նոր-Կեանքի սուրբ Սօսափիւնիկ
 Շնչեց - ձայնն անուշ—Տալիթա կոմի:

26. 5. 13



ՀՀ Ազգային գրադարան



NL0322708

30788

1
2

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Դրժեղ

Бюро печати

Тифлис, Головин. пр. 41.